# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ֆոտոն ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2022/2-1-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 31 | Աղ կերակրի | Ավանի աղի կոմբինատ | Ապրանքախմբին ներկայացվող ընդհանուր պարտադիր պայմաններ՝ Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը՝ դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) կանոնակարգերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: Կերակրի մանր աղ՝ բարձր տեսակի, յոդացված: Պիտանելիության ժամկետը՝ արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: *Պարտադիր ներկայացնել ապրանքային նշանը և արտադրողի անվանումը:Եթե պայմանագրի գործողության ընթացքում մատակարարումը իրականացվում է ոչ ամբողջական քանակով, մնացորդային խմբաքանակի |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մասով պայմանագիրը լուծվում է:Մատակարարման պայմանները. * Մատակարարումը իրականացվում է ամեն օր: Ընդ որում, մատակարարումը իրականացվում է մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 07.00-ն: * Ապրանքը(ները) մատակարարվում է Գնորդի կողմից ներկայացված պահանջագրի հիման վրա, որտեղ Գնորդի կողմից պետք է հստակ նշված լինի ձեռք բերվող ապրանքի(ների) համառոտ նկարագրությունը, չափման միավորը, քանակը: Ընդ որում, պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից մեկ օր առաջ ժամը 10:00-ից մինչև 11.00-ն): Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով: * Ընդունել ի գիտություն, որ պայմանագիր կնքելուց հետո Վաճառողը, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի համաձայն, պետք է գրանցված լինի սննդի շղթայում ընդգրկված սննդի շղթայի օպերատորների ցանկում, ըստ անհրաժեշտության: * Պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է վերոնշյալ ապրանքի(ների) համար: Ընդ որում, յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փաթեթավորման վրա պետք է մակնշված լինի արտադրող ձեռնարկության անվանումը, արտադրանքի անվանումը, տեսակը, արտադրության ժամկետը, մատակարար ձեռնարկության անվանումը, պահպանման ժամկետը, ապրանքի քաշը, օրենքով սահմանված այլ տեղեկատվություն: Բոլոր տեսակի գրառումները ֆիզիկական ներգործության արդյունքում չպետք է մաքրվեն: * Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում՝ ղեկավարվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Մատակարարումն իրականացվում է Երևան քաղաքում ,Գնորդի կողմից նշված հասցեով: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Фотон в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2022/2-1-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 31 | | | |